

<https://doi.org/10.46991/hc.2025.si1.289>

Intangible Cultural Heritage as an Opportunity for the Development of Armenian Studies

Ruzanna Tsaturyan

<https://orcid.org/0009-0003-1213-2721>

YSU Lecturer, NAS RA Institute of Archaeology and Ethnography, Researcher

r.tsaturyan@ysu.am

Keywords - Armenian studies, intangible cultural heritage, UNESCO, lists of intangible cultural heritage.

In recent decades, the field of intangible cultural heritage (ICH) has become one of the priorities of global cultural policy. Beyond focusing on tangible structures and sites, international cultural policy has begun to emphasize traditions and their bearers, considering them crucial for the future preservation of cultural heritage within modern cultural environments. In 2006, the Republic of Armenia ratified UNESCO's 2003 Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, thus aligning itself with the international agenda.

Incorporating elements of a country's cultural heritage into various international and national lists of intangible heritage involves more than bureaucratic and state policy processes; it primarily requires substantive and conceptual approaches. In this regard, Armenian studies play a decisive role. This paper explores the opportunities and potential of Armenian studies within the context of dynamic global and local ICH policy developments. Key issues discussed include re-evaluating methodological approaches in research in Armenian studies, the potential for "translating" Armenia's cultural heritage and representing it in global databases, and the challenges and opportunities of creating a research environment that supports ICH standards.

At the same time, the field of intangible cultural heritage offers methodological potential for Armenian studies, particularly in conducting interdisciplinary research with real policy impact. Realizing this potential could be mutually beneficial for both the advancement of Armenian studies and the preservation of intangible cultural heritage.

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 289-303.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 02.12.2024

Revised: 09.12.2024

Accepted: 23.04.2025

© The Author(s) 2025

Ոչ նյութական մշակութային ժառանգությունը՝ որպես հայագիտության զարգացման հնարավորություն
Ոչ նյութական մշակութային ժառանգությունը՝ որպես հայագիտության զարգացման
հնարավորություն

Ռուզաննա Ծատուրյան

ԵՊՀ դասախոս, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
գլխաշխատող

Հիմնաբառեր - հայագիտություն, ոչ
նյութական մշակութային ժառանգություն,
ՅՈՒՆԵՍԿՕ, ոչ նյութական մշակութային
ժառանգության ցանկեր:

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտը վերջին տասնամյակներում գլոբալ մշակութային քաղաքականության առաջնահերթություններից է: Մշակութային ժառանգության անշարժ կառույցներից ու տարածքներից բացի, միջազգային մշակութային քաղաքականությունը սկսեց կենտրոնանալ նաև ավանդույթների և դրանց կրողների ուղղությամբ՝ համարելով այն ժամանակակից մշակութային միջավայրերի ու մշակութային ժառանգության պահպանության ապագայի խնդիրը: 2006թ. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիան՝ մաս դառնալով միջազգային օրակարգի:

Ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգային և տեղական տարբեր անվանակարգերում և ցանկերում տվյալ երկրի մշակութային ժառանգության տարրերի ներառումը ի թիվս բյուրոկրատական, պետական քաղաքականության գործընթացների, նախևառաջ ենթադրում է բովանդակային և հայեցակարգային մոտեցումներ: Այս առումով, հայագիտության ոլորտը վճռորոշ դեր ունի:

Հոդվածում քննարկվում են հայագիտության հնարավորությունները և ներուժը՝ ոչ նյութական մշակութային ժառանգության գլոբալ և տեղական քաղաքականության դինամիկ զարգացումների համատեքստում: Կարևորվում են ինչպես հայագիտական ուսումնասիրությունների մեթոդաբանական մոտեցումների վերա(սահմանելու) խնդիրները, սեփական մշակութային ժառանգության «թարգմանության» և գլոբալ շտեմարաններում ներկայացվածության համար անհրաժեշտ մոտեցումների ներուժը, այնպես էլ ոչ նյութական մշակութային ժառանգության ստեղծած չափանիշներին աջակցող հետազոտական միջավայրի ներուժի խնդիրներն ու հնարավորությունները:

Միաժամանակ ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտը մեթոդաբանական առումով հայագիտության համար լուրջ ներուժ ունի միջգիտակարգային, ներառական և քաղաքականության վրա գործունե ազդեցություն ունեցող հետազոտությունների իրականացման առումով:

Այս ներուժի իրացումը փոխադարձ արդյունավետ կարող է դառնալ ինչպես հայագիտության հետազոտությունների, այնպես էլ ոչ նյութական մշակութային ժառանգության փորձի պահպանության համար:

Нематериальное культурное наследие как возможность развития арменоведения

Рузанна Цатурян

ЕГУ преподаватель, НАН РА институт археологии и этнографии, научный сотрудник

Ключевые слова – Арменоведение, нематериальное культурное наследие, ЮНЕСКО, списки нематериального культурного наследия.

Сфера нематериального культурного наследия в последние десятилетия стала одним из приоритетных направлений глобальной культурной политики. Помимо объектов и территорий материального культурного наследия, международная культурная политика начала фокусироваться также на традициях и их носителях, рассматривая это как важнейший вопрос для современных культурных сред и будущего сохранения культурного наследия. В 2006 году Республика Армения ратифицировала Конвенцию ЮНЕСКО 2003 года «О сохранении нематериального культурного наследия», став частью международной повестки дня.

Включение элементов культурного наследия конкретной страны в различные международные и национальные списки нематериального культурного наследия предполагает не только бюрократические и государственные процессы, но прежде всего содержательные и концептуальные подходы. В этом контексте арменоведение играет решающую роль. В статье рассматриваются возможности и потенциал арменоведения в контексте динамичного развития глобальной и местной политики в области нематериального культурного наследия. Особое внимание уделяется вопросам переосмысления методологических подходов арменоведческих исследований, потенциалу для «перевода» собственного культурного наследия и его представления в глобальных базах данных, а также исследовательской среды, поддерживающей стандарты, установленные для нематериального культурного наследия.

Одновременно нематериальное культурное наследие представляет значительный методологический потенциал для арменоведения в плане реализации междисциплинарных, инклюзивных исследований, способных оказывать реальное влияние на политику. Реализация этого потенциала может стать взаимовыгодной как для развития армяноведческих исследований, так и для сохранения нематериального культурного наследия.

* * *

Մուտք: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2003թ. հոկտեմբերի 17-ին ընդունվեց «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» Կոնվենցիան (այսուհետև՝ Կոնվենցիա)՝ շարունակելով և հանգրվանին հասցնելով նախորդ տարիներին ձեռնարկած իրավական կարգավորումների շարքը [Aikawa, 2004]: Կոնվենցիան նախաբանում հիմնավորելով ընդունման անհրաժեշտությունը փաստում է, որ «գլոբալիզացիայի և սոցիալական ձևափոխումների գործընթացները և դրանց հետևանքով համայնքների միջև ստեղծված նորացված երկխոսության պայմանները, ինչպես նաև անհանդուրժողականության երևույթները մեծացնում են ոչ նյութական մշակութային ժառանգության (այսուհետև՝ ՈՆՄԺ) վիճակի վատթարացման, անհետացման և քայքայման վտանգը» և որ անհրաժեշտ է նոր միջազգային գործիք ներմուծել՝ նաև հաշվի առնելով, որ այս ոլորտը կարգավորող և ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտը կարգավորող այլ պարտադրող գործիք չկար: [Կոնվենցիա 2003]

Կոնվենցիան՝ կարծես ստանձնում էր մարդկության բանավոր գիտելիքի խնամքի մարդկության պարտավորվածությունը՝ փորձելով համատեղել «հակոտնյա տեսանկյունների, կրողների, բյուրոկրատիայի և տեղի բնակչության տարբերվող ձայները: [Hafstein 2015] Կոնվենցիային միացող երկրների թիվը աստիճանաբար աճում էր, ներկայումս աշխարհի 183 երկրներ ընդունել կամ վավերացրել են Կոնվենցիան՝ պարտավորվելով միանալ մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին (Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage):

Որպես ՈՆՄԺ պաշտպանությանն ուղղված գործիք սահմանվում է, որ պետությունները պետք է ընդհանուր քաղաքականություն որդեգրեն, որն «ուղղված կլինի հասարակության մեջ ոչ նյութական մշակութային ժառանգության խթանմանը և պլանավորման ծրագրերում այդ ժառանգության պաշտպանության ընդգրկմանը: [Կոնվենցիա, հոդված 13]: Ըստ Կոնվենցիայի, ոչ նյութական մշակութային ժառանգությունը առավելապես կենսունակ և սերնդեսերունդ փոխանցվող պրակտիկաներն են, այն յուրատեսակ կամրջող ոլորտ է անցյալի, ներկա և ապագայի հետազոտությունների համար: ՈՆՄԺ պաշտպանությունը ենթադրում է

գործողությունների որոշակի փուլեր՝ բացահայտումը, ուսումնասիրումը, նույնականացումը, փաստաթղթավորումը, ներկայացումը, կենցաղավարման պայմանների ապահովումը, դրանց նկատմամբ հարգանքը, իրավապաշտպանությունը, բարելավումը: Թեպետ Կոնվենցիան և դրանից բխող տեղական իրավական կարգավորումները սահմանում են այս ժառանգությունը կրողների առաջնային իրավունքը, սակայն սահմանված չափորոշիչներով և քաղաքականության կազմակերպման պետականակենտրոն մոտեցումներով դժվար է պատկերացնել միայն կրողների կողմից այս ոլորտի քաղաքականության «սնուցման» հնարավորությունը: Այն չի կարող ապահովվել միայն այս ժառանգության կրողների կողմից, կամ անգամ միայն Կառավարությունների, պետական գերատեսչությունների կողմից [Han 2022]: Անպայմանորեն առաջանում է պատմության, մշակույթի մասին կամ ներկայացվող տարրի տեխնոլոգիական գիտելիք ունեցող ակադեմիական մասնագետների ներգրավման կարիք: ՈՆՄԺ միջազգային քաղաքականության ներդրումը տարբեր երկրներում առաջացրել պատրաստված կադրերի խնդիրը, քանի որ այս ոլորտը մշակութային առանձնահատկությունների և նրբերանգների շուրջ է: [Kurin 2007, 14]

Ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի, այնպես էլ Հայաստանի կարգավորումներում կրող համայնքը իր մշակութային ժառանգությունը կարող է ներկայացնել սահմանված ինստիտուցիոնալ ընթացակարգերով և կառույցներով, որոնք որպես կանոն պետության միջոցով են: Մյուս կողմից պետությունը՝ իր պետական կառավարման ապարատում բնական է, որ չի կարող ապահովել ՈՆՄԺ ոլորտի մանրամասն և համակողմանի գիտելիքներ ունեցող ծառայողներով: Այս դեպքում ՈՆՄԺ կրողների ժառանգության փաստաթղթավորումը, շտեմարանավորումը պետության անունից կատարելուն միանում են ակադեմիական և կրթական հաստատությունները, համալսարանները, հետազոտական ինստիտուտները, որոնք թեպետ դարձյալ պաշտոնական մարմիններ են, սակայն ունեն իրենց մեթոդաբանությունը և գիտական էթիկան, որին հետևում են: Այս առումով գիտական և համալսարանական հաստատությունները դառնում են կամուրջ՝ ժառանգության կրողների և պետական կառավարման համակարգի միջև՝ նրբանկատորեն և զգայուն կերպով նկարագրելով ժառանգությունը՝ պետության և միջազգային կառույցների սահմանած չափանիշներին համապատասխան:

Կոնվենցիան որպես առավել նոր միջազգային փաստաթուղթ, գնահատելով ոլորտի կայացման հնարավորությունները դիտարկում է գիտական հետազոտությունների ոլորտի խթանումը՝ որպես ոչ նյութական մշակութային ժառանգության, մասնավորապես վտանգված ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության արդյունավետության նպաստող հանգամանք: Այս կետը միանգամայն նոր «առաջադրանք» է սահմանում գիտության ոլորտի համար:

Հոդվածում քննարկվելու են հայագիտության համար այս նոր «առաջադրանքի»՝ ՈՆՄԺ ոլորտի հետազոտություններում ընդգրկման հնարավորությունները՝ որպես վերա(բացահայտված) դիտանկյուն, ինչպես նաև որպես ՈՆՄԺ պաշտպանության հնարավորություն: ՈՆՄԺ Հայաստանի փորձի մասին գիտական ուսումնասիրությունները և հրատարակությունները խիստ հազվադեպ են, իսկ ՈՆՄԺ ոլորտում հայագիտության դերի խնդրականացման ուղղությամբ սա թերևս առաջին քննարկումներից կարող է դառնալ: Հայագիտությունը՝ որպես Հայաստանի հումանիտար գիտության զարգացման առանցքային ուղղություն, սովորաբար քննարկվում է բացառապես անցյալի գիտելիքի տեսանկյունից, մինչդեռ ՈՆՄԺ ոլորտում ներգրավումը անցյալի մասին գիտելիքը ծառայեցնում է ապագայի հնարավորությունների և ժամանակակից խնդիրների քննարկմանը: Հոդվածը պատրաստվել է քաղաքականության հետազոտության մեթոդով իրականացված ուսումնասիրության արդյունքում՝ փաստաթղթերի, օրենսդրության բովանդակային վերլուծության միջոցով:

Մոլորակի մշակութային ժառանգության շտեմարան. հայագիտության համար գլոբալ հեռանկար: Գիտության և կրթության ոլորտները ըստ նոր միջազգային օրենսդրության սահմանվում են որպես առաջնային հարթակներ՝ ոչ նյութական մշակութային ժառանգության կենսունակությունը, փոխանցելիությունը, երիտասարդության շրջանում իրազեկվածությունը բարձրացնելու համար: Կոնվենցիան առաջարկում է դիտարկել գիտական հետազոտությունների միջոցով ՈՆՄԺ պաշտպանության համար կարողությունների զարգացումը, կրթական ծրագրերի իրականացումը: [Կոնվենցիա 2003, հ. 14]: Այսպիսով, Կոնվենցիայի շնորհիվ շրջանառության մեջ է մտնում նոր հասկացություն՝ մշակութային ոլորտի համար՝ ոչ նյութական մշակութային ժառանգությունը, որը կարծես առավել մոտ էր ավանդական մշակույթ, ֆոլկլոր, բանավոր ժառանգություն տերմիններին:

Կոնվենցիան սահմանում է ոչ նյութական մշակութային ժառանգությունը համայնքների, խմբերի կողմից որպես իրենց մշակութային ժառանգության մաս ճանաչված, կենցաղում հաստատուն տեղ զբաղեցնող սովորույթների, ավանդույթների, ծեսերի, պատկերացումների, դրանց դրսևորման, արտահայտման ձևերի, գիտելիքների ու հմտությունների, ինչպես նաև դրանց առնչվող գործիքների, առարկաների, ստեղծագործությունների և մշակութային տարածքների ամբողջություն [Կոնվենցիա 2003, հ.2]:

Ոչ նյութական մշակութային ժառանգության սահմանումը ներառում է որոշ առանցքային, բանալի հասկացություններ, ինչպես օրինակ կրողները և սերնդեսերունդ փոխանցումը: Կոնվենցիան սահմանում է ոչ նյութական մշակութային ժառանգության հիմնական ոլորտները, որոնք են ժողովրդական բանահյուսությունը, բարբառները,

ավանդական արհեստագործության գիտելիքը, հմտություններն ու փորձը, տոները, ծեսերը, կլիմայի և տիեզերքի մասին պատկերացումները, ժողովրդական կատարողական արվեստը, խոհանոցային ավանդույթները, խաղերը և այլն: [Կոնվենցիա 2003, հ. 2]: Որևէ տարրի համար ոչ նյութական մշակութային ժառանգություն համարվելու համար բնութագրական է դառնում ոչ թե մշակութային տեսանելի արդյունքը ինքնին, այլ դրա «անշոշափելի», բայց առկա դրսևորումը՝ որևէ փորձառության, սովորության, պատկերացումների ձևով: Օրինակ՝ արհեստների դեպքում դիտարկվում է ոչ այնքան արհեստագործության արդյունքը, օրինակ թոնիրը, այլ թոնիր պատրաստելու հմտությունները, որոնք ժամանակակից թոնիր պատրաստողներին փոխանցվել են սերնդեսերունդ, այսինքն հանդիսանում են ավանդական հմտություններ:

Կարևորելով «ոչ նյութական մշակութային ժառանգության կրողներ» հասկացությունը՝ Կոնվենցիան կարծես «թույլատրում» և ճանաչում է խմբի, համայնքի, անհատի «իշխանությունը», ովքեր համարում են որևէ մշակութային դրսևորում որպես իրենց խմբային ինքնության բնութագրիչ, խորհրդանիշ: Առևտնետիկությունը կամ տեղականությունը դառնում է մշակութային այս շտեմարանի բազմաձայնությունը ձևավորող հանգամանքը:

Կոնվենցիան պարտավորեցնում է միացած երկրներին տեղայնացնել միջազգային քաղաքականությունը՝ ստեղծելով ազգային/տեղական գործիքներ, հարթակներ և ոչ նյութական մշակութային ժառանգության մեխանիզմներ: Այս համատեքստում ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ 2006թ. վավերացվում է Կոնվենցիան, որին հետևում է կիրարկման համար անհրաժեշտ ազգային գործիքակազմի ստեղծումը:

Կոնվենցիայի ընդունումը որպես պարտադիր ուժ ունեցող կարգավորող փաստաթուղթ, նոր հնարավորությունների հետ մեկտեղ առաջացնում է նոր խնդիրներ՝ կապված տեղական հմտությունների, հնարավորությունների, մեթոդաբանության մշակման և կիրարկման հետ: Յուրաքանչյուր պետություն պետք է մշակեր իր ազգային օրենսդրությունը, չափորոշիչները, ինչը ենթադրում էր փորձագետների, գիտելիքի ներդրում:

Ըստ սահմանված հնարավորությունների՝ Հայաստանը ձեռնարկում է ՈՆՄԺ պաշտպանության համար տարբեր շտեմարանների ստեղծումը և դրա համար անհրաժեշտ օրենսդրական հենքի ձևավորումը: Կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից երկրներին՝ հարմարվելով սեփական իրավիճակին, կազմել իր տարածքում գոյություն ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարաններ, որոնք պետք է պարբերաբար նորացվեն: ՅՈՒՆԵՍԿՕ-ն ստեղծում է երկու միջազգային շտեմարան՝ Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկ և Ոչ նյութական մշակութային ժառանգության անհապաղ պահպանության կարիք ունեցող տարրերի ցանկ [[Browse the Lists of Intangible Cultural](#)

Ոչ նյութական մշակութային ժառանգությունը՝ որպես հայագիտության զարգացման հնարավորություն
[Heritage and the Register of good safeguarding practices - intangible heritage - Culture Sector - UNESCO](#)]:

ՈՆՄԺ տարբեր ցանկերն ու շտեմարանները իհարկե կոչված են մշակութային ժառանգության պաշտպանությանը: Սակայն, հաճախ պետության տեսանկյունից դրանք վերածվում են կամ «հպարտության» ցուցակների կամ ուղղակի ֆորմալ փաստաթղթերի՝ պետությունների համար դառնալով Կոնվենցիային միանալը հիմնավորող փաստարկ: Մինչդեռ, հետազոտողները դիտարկել են, որ ցանկերում ներառումը յուրահաստուկ արժևորում է տալիս տվյալ մշակութային դրսևորմանը. «Մշակութային որևէ տարրը, երբ ընդգրկվում է «Մարդկության մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում»՝ վերածվում է «մետամշակութային արտեֆակտի»: Մշակութային ֆենոմենի ցանկագրումն ու դրա հետագա իրեղենացումը այն փոխակերպում են՝ տարբերակելով այն զուտ տեղական մշակույթ դիտելուց» [Pfeilstetter, 2017:11] Այս ցանկերը շատ տեսանելի են, քիչ ծախսատար և ամենահարմար տարբերակն են կառավարությունների համար «ինչ որ սիմվոլիկ բան անելու» համար: [Kirshenblatt-Gimblett, B. 2014:24]: Եթե ներկայացուցչական ցանկը ցուցադրում է ներառված տարրերի տարածվածությունը, ճանաչելիությունը և կենսունակությունը, ապա վտանգված ժառանգության ցանկի նպատակը ուշադրություն և միջազգային համագործակցություն մոբիլիզացնել՝ պաշտպանելու ՈՆՄԺ այն տարրերը, որոնց կենսունակությունը վտանգված է, չնայած ներդրված ջանքերին (օրինակ որպես բնական կամ մարդածին աղետների, կամ համաշխարհայնացման, միգրացիայի միտումների հետևանք և այլն): Այս ցանկերում ներառվելու գործընթացը լավ կանոնակարգված է, սահմանելով ժամկետները, պահանջվող փաստաթղթերը, վիդեո և ֆոտո նյութերը, կրող համայնքների աջակցության նամակները, տեղական շտեմարաններում ներառված լինելու պահանջները և այլն [Criteria For Inscription 2005]: Միաժամանակ, տարբեր դիտարկումները արձանագրում էին, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկերում գրանցվելը դառնում էր «մրցակցություն՝ համագործակցության փոխարեն» [Varpahovskis 2018]՝ խորացնելով մշակութային «պատերը և սահմանները» և դառնալով հակոտնյա ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կոնվենցիայի ոգուն և սկզբունքներին: Այս խնդիրները հաշվի առնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի ՈՆՄԺ ոլորտի կառավարման ուղերձներում սկսեց կարևորվել միացյալ հայտերի նախաձեռնությունները՝ շեշտադրելով «համատեղ մշակութային ժառանգության» (shared cultural heritage) մոտեցումները: Ընդ որում, այս համատեղ հայտերում համատեղությունը քննարկվում էր ինչպես «համատեղ-նույնական», այնպես էլ «համատեղ-բազմազան» համատեքստերում՝ պայմանավորված քաղաքական կամ մշակութային դիվանագիտության խնդիրներով, ինչպես օրինակ Կորեական ըմբշամարտը ներկայացնող համատեղ հայտը Հյուսիսային և Հարավային Կորեաների կողմից [ICH RL

01533] կամ Արմավի և արմավենու մշակության հետ կապված պրակտիկաների միացյալ հայտը՝ ներկայացված 15 երկրների մասնակցությամբ [ICH RL-01902]: Այս միացյալ հայտերի քաղաքականությունը, որը քաջալերվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից որոշ դեպքերում կարող է կիրառվել որպես պետությունների քաղաքական և տարածքային պատկանելությունը շեշտադրող գործիք, մյուս կողմից՝ որպես տարածաշրջանային և գլոբալ համագործակցության գործիք [Debarbieux, B., Bortolotto, C., Munz, H., & Raziano, C. 2021, 15]: Իհարկե, այս քաղաքական նախաձեռնությունների, համակրանքների ու տարածայնությունների մշակութային մանիֆեստացիաները «պաշտոնական» կիրառվում են մշակութային դիվանագիտության գործիքակազմով, որտեղ աներկբա է քաղաքականության և ոլորտային ակադեմիական գիտելիքի ու մասնագիտական համայնքի ներգրավման անհրաժեշտությունը: Որպես օրինակ կարող է ծառայել Հայաստանի և Ադրբեջանի կողմից ներկայացվող հայտերի ուսումնասիրությունը, որը թեպետ այս հոդվածի առաջնային խնդիրներին չի առնչվում, սակայն կարևոր է՝ հայագիտության ներգրավվածությունը գլոբալ հեռանկարների տեսանկյունից մեկնաբանելու համար: Ադրբեջանը իր մշակութային դիվանագիտության մեջ կիրառում է ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերը որպես գործիք՝ մի կողմից ադրբեջանականությունը կառուցելու և ցուցադրելու համար՝ որպես կանոն այստեղ ձգտելով հակադրվել հայկական մշակութային ժառանգությանը, կամ կառուցելով Ադրբեջանի համար ընդունելու մշակութային ավելի մեծ աշխարհագրական արելային պատկանելության դրսևորումներ: Ինչպես օրինակ 2016թ. ՈՆՄԺ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենսունակ ժառանգության ցանկում 4 այլ երկրների հետ համատեղ «Հարթ հացի պատրաստման և կիրառման ավանդույթը. լավաշ, կատիրմա, յուֆկա» հայտը գրանցելը՝ մի կողմից զծագրելով ադրբեջանականության նախընտրելի համագործակցության տարածքը՝ հայտնին միացած երկրների միջոցով (Իրան, Ղազախստան, Ղրղըզստան, Թուրքիա), մյուս կողմից կարծես պատասխանելով հայտնի ընդունումից դեռևս երկու տարի առաջ նույն ցանկում Հայաստանի անունից ներկայացված և գրանցված «Լավաշ. ավանդական հացի պատրաստման և կիրառման մշակույթը» հայտին: ՅՈՒՆԵՍԿՕ-յի հայտերը գնահատող փորձագետները այստեղ վերապահում արձանագրեցին՝ «ի նկարտի ունենալ որ հարթ հաց պատրաստելու մշակույթը տարածված է նաև տարածաշրջանում և այլուր»՝ փորձելով մշակութային ժառանգության քաղաքականացվածությունը և հնարավոր սրացումները կանխել [[Decision of the Intergovernmental Committee: 11.COM 10.B.2 - intangible heritage - Culture Sector - UNESCO](#)]:

Ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգային և տեղական տարրեր անվանակարգերում և ցանկերում տվյալ երկրի մշակութային ժառանգության տարրերի ներառումը ի թիվս բյուրոկրատական, պետական քաղաքականության գործընթացների, ինչպես երևաց նաև օրինակներից, ենթադրում է բովանդակային և հայեցակարգային

Ոչ նյութական մշակութային ժառանգությունը՝ որպես հայագիտության զարգացման հնարավորություն մոտեցումներ: Այս առումով, հայագիտության, պատմագրության, ազգագրության հետազոտությունները վճռորոշ դեր ունեն: Ինչպես Կոնվենցիան, այնպես էլ Հայաստանի օրենսդրությունը, իրավական կարգավորումները ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության քաղաքականության մեջ սահմանում են հետազոտության՝ հատկապես պատմական գիտելիքի անհրաժեշտությունը: Թեպետ մի կողմից ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի ձևակերպումը ըստ Կոնվենցիայի խստորեն կապված է կրողների կողմից որպես իրենց ժառանգության ընկալվելու և որպես այդպիսին ձևակերպված լինելու պայման/պարտադրանքի մեջ, սակայն գործընթացն ինքնին պետականակենտրոն է, ինչը ենթադրում է նաև «լեգիտիմ, պաշտոնական» գիտելիքի ներառում և տեղական կրողների կողմից սահմանված գիտելիքի վերահայեցում:

Այս առումով հայագիտությունը՝ իր տարբեր գիտակարգերով նոր հնարավորություն է ստանում միջամտելու ոչ նյութական մշակութային ժառանգության գլոբալ և տեղական քաղաքականության դինամիկ զարգացումներին, «սնուցելու» «փափուկ ուժի» կամ մշակութային դիվանագիտության ուղերձները [Nye, J. S. Jr. 2008] և հետազոտության միջոցով մասնակցելով ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը: «Հայագիտության զարգացման հայեցակարգ»-ով սահմանված հայագիտության ընդգրկման ոլորտները որպես գիտությունների համակարգ, որն ուսումնասիրում է հայոց լեզուն և գրականությունը, պատմությունը, հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթը՝ ներառելով հայոց լեզուն իր բոլոր դրսևորումներով՝ գրաբար, միջին հայերեն, արդի գրական հայերենն իր երկու ճյուղերով ու համակարգերով՝ արևելահայերեն ու արևմտահայերեն, խոսքի մշակույթ, բարբառագիտություն և այլն, հայ գրականագիտությունն իր բոլոր դրսևորումներով ու զարգացման շրջափուլերով, հայ պատմագիտություն, հնագիտություն, ազգագրություն, աղբյուրագիտություն, պատմագրություն, մատենագրություն և մատենագիտություն, վիմագրագիտություն, վավերագիտություն ու դրամագիտություն, Հայաստանի պատմական աշխարհագրություն, պատմական ժողովրդագրություն, մարդաբանություն և այլն, հայ իրավագիտությունը, հայ հասարակական-քաղաքական և տնտեսագիտական մտքի պատմությունը, հայ իմաստասիրությունն ու արվեստագիտությունը, սփյուռքագիտությունը հարևան ժողովուրդների հետ հայերի պատմամշակութային հարաբերությունների ուսումնասիրությունը [Հայեցակարգ հայագիտության զարգացման, 1.1], առնչվելով ոչ նյութական մշակութային ժառանգության խնդիրներին, դեռևս քիչ են ներառված մշակութային քաղաքականության այս միջազգային օրակարգում: Մինչդեռ ոչ նյութական մշակութային ժառանգության քաղաքականությունը որպես գլոբալ հարթակ անհրաժեշտություն է առաջացնում մասնակից երկրների մշակութային ժառանգության

«թարգմանության» և գլոբալ շտեմարաններում ներկայացվածության համար նոր լեզվի մշակման: ՅՈՒՆԵՍԿՕ-ի ՈՆՄԺ ցանկերում ներառվելու նպատակով սահմանված պահանջներով և չափանիշներով հայտերի պատրաստումը արդեն ենթադրում է բազմազգիտակարգային մոտեցում և գիտելիքի կիրառում:

Ըստ սահմանված հայտաձևի, որևէ մշակութային դրսևորման նկարագրությունը ինքնին ենթադրում է պատմական, ազգագրական, բանահյուսական, իրավական՝ ընդ որում մարդու իրավունքների, ժամանակակից աշխարհի հիմնախնդիրների՝ գենդերային հավասարության, կլիմայի փոփոխության, խոշտանգումների կանխարգելման ոլորտների իմացություն, քանի որ հայտաձևերում անհրաժեշտություն է առաջանում քննարկել ներկայացվող տեղական մշակութային դրսևորումը այս բոլոր չափանիշների հետ համեմատությամբ: Որպես օրինակ դիտարկենք «Լավաշ. ավանդական հացի պատրաստման և կիրառման ավանդույթը» հայտաձևի [[Lavash, the preparation, meaning and appearance of traditional bread as an expression of culture in Armenia - intangible heritage - Culture Sector - UNESCO](#)] մշակման փորձից, երբ ըստ սահմանված պահանջների անհրաժեշտ էր քննարկել և հիմնավորել, թե արդյո՞ք լավաշի պատրաստման և կիրառման հայկական ավանդույթը չի խրախուսում գենդերային կարծրատիպեր, չի վնասում էկոլոգիային, չի ներառում այնպիսի սովորույթներ, որոնք հակասում են մարդու համընդհանուր իրավունքներին, արդյո՞ք չի հակասում մարդկանց, խմբերի միջև փոխադարձ հարգանքի պահանջներին, կայուն զարգացման նպատակներին և այլն: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մշակված հայտաձևերի վերջին՝ 2024թ. տարբերակում սահմանվում են այն հիմնական խնդիրները, որոնց նկատմամբ պետք է քննարկել ներկայացվող մշակութային տարրը, այսինքն ներկայացվող հայտում պետք է հիմնավորվի, թե կրող համայնքի կարծիքով տվյալ տարրը ստորև նշված որ խնդրի լուծմանն է նպաստում՝ պարենային անվտանգություն, առողջապահություն, որակյալ կրթություն, գենդերային հավասարություն, ներառական տնտեսական զարգացում, կայուն բնապահպանություն ներառյալ կլիմայի փոփոխությունը, խաղաղություն և սոցիալական համախմբվածություն կամ այլ [[Forms to be used for nominations, proposals, assistance requests, accreditation requests and periodic reporting - intangible heritage - Culture Sector - UNESCO](#)]: Արդյունքում, տեղական մշակութային ժառանգության ներկայացման անհրաժեշտ պայման է դառնում միջգիտակարգային համագործակցությունը կամ հայագիտական խնդիրների հետազոտության մեջ բազմա և միջգիտակարգայնության ներմուծման հրամայականը, հայագիտական, պատմական խնդիրների դիտարկման նոր հարացույցերի կիրառումը:

Մշակութային ժառանգության պաշտպանության ազգային հարթակը և հայագիտության հնարավորությունները: Միջազգային այս նոր օրակարգում փաստացի առաջնորդող է դառնում մշակութային մարդաբանության էթիկական և հայեցակարգային

Ոչ նյութական մշակութային ժառանգությունը՝ որպես հայագիտության զարգացման հնարավորություն մոտեցումը՝ մշակույթի ընկալման, դրա հանդեպ «սեփականության իրավունքի» հետ կապված՝ առաջ մղելով Բոասյան «մշակութային հարաբերականության» տեսական մոտեցումները [Boas 1938]: Հայաստանը Կոնվենցիան վավերացնելուց հետո ընդունեց «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում էր օրենքի տարածման ոլորտները՝ բանահյուսություն, ժողովրդական երաժշտարվեստ, ժողովրդական նվագարանային երաժշտություն, ժողովրդական պարարվեստ, ժողովրդական թատերախաղեր, ժողովրդական տոներ, մարդու կյանքի շրջափուլերի (ծնունդ, հասունություն, ամուսնություն, մահ) հետ կապված ժողովրդական սովորույթներ, հասարակական, ազգակցական, ընտանեկան հարաբերությունների հետ կապված սովորույթներ, ազգային հավատալիքներ ու սովորույթներ, ժողովրդական կենցաղն իր դրսևորման տարբեր ձևերով, տնտեսական կյանքի հետ կապված հմտություններ (երկրագործություն, անասնապահություն, ձկնորսություն, որսորդություն, առևտուր և այլն), բնության վերաբերյալ պատկերացումներ և գիտելիքներ, ազգային խոհանոց, ազգային խաղեր, ավանդական արհեստների հետ կապված հմտություններ և գիտելիքներ, ազգային տարազը, ժողովրդական ճարտարապետությունը, բնակարանը և կահկարասին, այսինքն մեծամասամբ հայագիտության ոլորտների հետ համահունչ ոլորտներ: [ՀՀ օրենք, հոկտեմբերի 7, 2009]: Օրենքի ընդունումից հետո ոլորտային մասնագետների կողմից մշակվեցին մեթոդաբանական մոտեցումները և չափորոշիչները [Սարգսյան 2009]: Գիտական խմբի այս ուղեցույցի հիման վրա ընդունվեցին իրավական ակտեր՝ ՀՀ տեղական ցանկերի՝ ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի, անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի, մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկերի կազմման, այդ ցանկերում տարրերի գրանցման չափորոշիչների մասին: [ԿՈ-№ 310-Ա; ԿՈ- N 36-Ն; N 241-Ն] Ըստ սահմանված ձևաթղթի և չափորոշիչների որևէ տարրի գրանցման համար հայտի նախապատրաստումը ենթադրում էր հետազոտական աշխատանք՝ ներկայացնելու համար տարրի գիտական, ընդհանրական անվանումը, տեղական անվանումները, կրողներին, տարածման շրջանը, բնագավառը, ինչպես նաև պատմական հակիրճ տեղեկանք՝ տարրի ձևավորման, պատմական աղբյուրների հիշատակության մասին, կենսունակության մասին տվյալներ, մասնավորապես՝ տարրի գործառույթները, պատմական, մշակութային, տնտեսական, հասարակական նշանակության պահպանվածությունը, զարգացումներն ու փոփոխությունները, ինչպես նաև տարրի բնութագիրը՝ եզակիությունը, պատմական, մշակութային, սոցիալական և այլ առանձնահատկությունները: Ակնհայտ է, որ այս պահանջները ուղղակի մշակութային ժառանգության տեղական կրողների ջանքերով դժվար կլինեին ապահովել: ՀՀ մշակույթի նախարարին կից ոչ նյութական մշակութային ժառանգության հարցերով

մասնագիտական խորհրդում ներկայացված տարրեր ընդունվելուց հետո՝ մինչև Կառավարության հաստատմանը ներկայացվելը, ուղարկվում են շահագրգիռ՝ մասնագիտական կամ առնչվող հիմնարկներ՝ խմբագրման, առաջարկությունների և նկատառումների համար: Սովորաբար ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, Արվեստի ինստիտուտը, Մատենադարանն են առավել ակտիվ ներգրավված այս հայտերի հետ աշխատանքներում, քանի որ ոլորտի մասին տեղեկատվությունը, հմտությունները այստեղ են առավել բարելավված: Մինչդեռ հայագիտության զարգացման տեսանկյունից ոլորտային բոլոր կազմակերպությունները կարող են հանդիսանալ այս գործընթացում ակտիվ դերակատարներ՝ ինչպես ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում ներառվելու համար հայտեր կազմելու, այնպես էլ ներկայացված հայտերը բարելավելու, խմբագրելու և դիտարկելու ուղղությամբ: Հայագիտության հեռանկարային զարգացման տեսանկյունից կարևոր է նաև ՀՀ տարածքից դուրս գտնվող հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության հաշվառումն ու հետազոտումը [ԿՈ N1173-Ն], ինչը սփյուռքի հետազոտությունների համար նոր դիտանկյուն կարող է դառնալ:

Ամփոփում: Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում հայագիտության վերա(դիրքավորումը) նոր հնարավորություն է անցյալում ստեղծվածը ապագայի զարգացման համար կիրառելու տեսանկյունից: Համայնքների զարգացման, համայնքներում մշակութային ժառանգության կրող խմբերի, կազմակերպությունների, անհատների հետազոտությունը, հրատարակությունները լուրջ գործոն կարող են դառնալ համայնքային կայուն զարգացման, զբոսաշրջության զարգացման համար:

Համայնքներում, ՈՆՄԺ ավանդույթների կրողների շրջանում ոչ նյութական մշակութային ժառանգության ապրող և վտանգված պրակտիկաների ուսումնասիրությունը, դրանք հանրահռչակման ուղղությամբ հանրային ջանքերի ցուցադրումը, նոր մշակութային տարածքների մասին առաջարկների ներկայացումը և հետևողական ուսումնասիրությունները, պաշտպանության գործողությունները կարող են գործուն խթան դառնալ նաև հայագիտության հանրայնացման և հասարակության հետ «մտերմացման» տեսանկյունից:

Հայկական անցյալի մշակութային ժառանգության ուսումնասիրությունը հարստացնելով ներկայի, փոփոխությունների, մարտահրավերների, ինչպես օրինակ համաշխարհայնացման, տեղահանությունների և այլ արդիական խնդիրների քննարկմամբ, կխթանի նաև միջգիտակարգային հետազոտությունները՝ հնարավոր դարձնելով հայ ժամանակակից ինքնության բազմամակարդակ հետազոտությունը Հայաստանում և Հայաստանից դուրս:

Այս ներուժի իրացումը փոխադարձ արդյունավետ կարող է դառնալ ինչպես հայագիտության հետազոտությունների, այնպես էլ ոչ նյութական մշակութային

Ոչ նյութական մշակութային ժառանգությունը՝ որպես հայագիտության զարգացման հնարավորություն ժառանգության փորձի պահպանության և մշակութային ժառանգության շարունակականության համար:

Գրականության ցանկ

Voch' nyut'akan mshakut'ayin zharrangut'yun: Dasakargumn u ch'ap'voroshich'nery: (Teghekatvakan ughets'uyts') 2009 / Khmb., A. Sargsyan; HH GAA Hnagitut'yan yev azgagrut'yan in-t. HH Mshakuyt'i nakhararut'yun. Yerevan: **(in Armenian)**

Aikawa 2004-Noriko Aikawa, An Historical Overview of the Preparation of the UNESCO International Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, No. 221-222 (Vol. 56, No. 1-2, 2004), Oxford, էջ 137.

Boas 1938-Boas, F., The mind of primitive man (Rev. ed.). 1938, Macmillan.

[Date palm, knowledge, skills, traditions and practices - intangible heritage - Culture Sector - UNESCO.](#)

Debarbieux, B., Bortolotto, C., Munz, H., & Raziano, C., 2021- Debarbieux, B., Bortolotto, C., **Munz, H., & Raziano**, Sharing heritage? Politics and territoriality in UNESCO's heritage lists. Territory, Politics, Governance, 2021, 1-17.

Hafstein 2015-Hafstein, Intangible Heritage as Diagnosis, Safeguarding as Treatment. Journal of Folklore Research, 2015, 52(2-3), 281.

Han 2022-Han, C., On the Subjects of Intangible Cultural Heritage Practice and Protection. Western Folklore, 2022, 81(2/3), 297-310.

Kirshenblatt-Gimblett, B., 2014-Kirshenblatt-Gimblett, B Intangible Heritage as Metacultural Production. Museum, 2014, 66: 163-174.

Kurin, R. 2007, Kurin, R., Safeguarding intangible cultural heritage: Key factors in implementing the 2003 Convention. International journal of intangible heritage, 2007, 2(8), 9-20.

Nye, J. S. Jr., 2008-Nye, J. S. Jr. The ANNALS of the American Academy of Political and Social Science, 2008, 616(1), 94-109.

Pfeilstetter, R., 2017-Pfeilstetter, R., Culture in Heritage On the Socio-Anthropological Notion of Culture in Current Heritage Discourses. Anthropos, 2017, 112 (2), 609-616.

[Traditional Korean wrestling \(Ssirum/Ssireum\) - intangible heritage - Culture Sector - UNESCO](#)

Varpahovskis, E., 2018-Varpahovskis, E., Intangible cultural heritage: Is it a platform for cooperation or competition between cultural diplomacies? The case of South Korea-Japan-China relations within UNESCO's ICH framework. SNU Journal of International Affairs, 2018, 3(1).

Criteria for inscription on the lists established by the 2003 convention for the safeguarding of the intangible cultural heritage Paris 5 – 6 December 2005.

Karg voch' nyut'akan mshakut'ayin arzhek'neri nuynakanats'man, p'astat'ght'avorman, pahpanut'yan yev teghekatvut'yan p'vokhanakman, Havelvats N 1 HH karravarut'yan 2010 t'vakani septemberi 3-i N 1173 - N voroshman. **(in Armenian)**

Hayagitut'yan zargats'man hayets'akargin, hayagitut'yan volorti zargats'man 2012-2025 t'vakanneri rrazmavarut'yany yev dra irakanats'man mijots'arrumneri zhamanakats'uyts'in havanut'yun talu masin, Hayastani Hanrapetut'yan karravarut'yan nisti ardzanagrut'yunits' k'aghvatsk', 12 hunvari 2012 t'vakani N 1 ardzanagrayin voroshum. **(in Armenian)**

Hayastani Hanrapetut'yan voch' nyut'akan mshakut'ayin arzhek'neri ts'anckeri kazmman ch'ap'voroshich'nery yev voch' nyut'akan mshakut'ayin zharrangut'yan arzhek'neri ts'anckeri hastatelu masin karravarut'yan № 310-A voroshum, 2010 marti 1. **(in Armenian)**

HH mshakut'ayin taratsk'neri chanach'man ch'ap'voroshich'nery yev mshakut'ayin taratsk'neri ts'anckeri hastatelu masin HH karravarut'yan voroshum, 2012. **(in Armenian)**

HH orenk'y voch' nyut'akan mshakut'ayin zharrangut'yan masin, hoktember 7, 2009t' HO-187-N. **(in Armenian)**

HH` anhapagh pashtpanut'yan karik' unets'vogh voch' nyut'akan mshakut'ayin zharrangut'yan ts'anckeri grants'man u kazmman ch'ap'voroshich'nery yev drants' himan vra kazmvats voch' nyut'akan mshakut'ayin zharrangut'yan arzhek'neri ts'anckeri hastatelu masin HH karravarut'yan voroshum, 2011. **(in Armenian)**

Voch' nyut'akan mshakut'ayin arzhek'neri nuynakanats'man, p'astat'ght'avorman, pahpanut'yan yev teghekatvut'yan p'vokhanakman kargy u voch' nyut'akan mshakut'ayin arzhek'i vkayagri dzevy hastatelu masin Karravarut'yan N1173-N voroshum, 2010 septemberi 3. **(in Armenian)**